ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի փետրվարի 28-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/04»**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2018 թվականի փետրվարի 27-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2018 թվականի փետրվարի 28-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային շուկայում նավթամթերքի գները հաճախակի աննախադեպ տատանվում են, ուստի ընկերությունը կարող է Ձեզ գնառաջարկ ներկայացնել և մասնակցել 06.03.2018թ մրցույթին միայն 2018թ. առաջին կիսամյակի համար:

Առաջարկում ենք Ձեզ հրավերում կատարել փոփոխություն և մրցույթը անցկացնել միայն 2018թ. առաջին կիսամյակի համար:

Պարզաբանում

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ հայտնում ենք, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից, հրավերը թողնվում է անփոփոխ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/04» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: